ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՀ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 26.02.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-8/1-1 պայմանագիրը 03.09.18թ-ին մասնակի լուծելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: *Մասնակցի դիմումը*՝ հիմք ընդունելով 26.02.2017թ. կնքված N ԳՀԾՁԲ-8/1-1 գնման Պայմանագրի 7.8 կետը 104000 հատ «Հայ զինվոր» թերթի 26-51 համարների մասով մասով Պայմանագիրը երկկողմանի մասնակի լուծելու առաջարկով:

Փոփոխության նկարագրություն: N ԳՀԾՁԲ-8/1-1 *պայմանագիրը մասնակի լուծելու մասին.*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշումը, ինչպես նաև Պայմանագրի 7.8 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ «Հայ զինվոր» թերթի 26-51 համարների մասով 104000 հատ(երրորդ-չորրորդ եռամսյակներ):

Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 6760000 (վեց միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամով և կազմում է 7220000 (յոթ միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Փոփոխության հիմնավորում: Չի հակասում ՀՀ կառավարության որոշմանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տ.Աբրահամյանին:

Հեռախոս՝ *010-29-44-18*:

Էլ. փոստ՝ t.abrahamyan.*am:*

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N ԳՀԾՁԲ-8/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 03.09.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ.Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Զունգուրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, , երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով կողմերի նախնական համաձայությունը, ինչպես նաև 26.02.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-8/1-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.8 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք Պայմանագրի 7.8 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ «Հայ զինվոր» թերթի 26-51 համարների մասով 104000 հատ(երրորդ-չորրորդ եռամսյակներ):

1.2 Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 6760000 (վեց միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամով և կազմում է 7220000 (յոթ միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ. ներառյալ ԱԱՀ:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը. կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից. որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ. յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն պայմանագով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը. իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ աշխատակազմը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Նորքի 2-րդ, 32տ
ՀՀ ֆինանսների նախարարության	«Յունիբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 24137009632300
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 01505197
ՀՎՀՀ 02522157	տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ս.ՉՈՒՆԳՈՒՐՅԱՆ